



Support to the Implementation of the Judicial  
Reform in Armenia

Աջակցություն Հայաստանում դատական  
բարեփոխումների իրականացմանը

Սույն արբիտրաժային գործ թիվ 7-ը մշակվել է «Աջակցություն Հայաստանում դատական բարեփոխումների իրականացմանը» Եվրոպական միության, Եվրոպայի խորհրդի կողմից ֆինանսավորվող և Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվող ծրագրի շրջանակներում: Սույն գործի մեջ արտահայտված կարծիքները հեղինակին են և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպայի խորհրդի դիրքորոշումը: Սույն արբիտրաժային գործ թիվ 7-ը մշակվել է Հայաստանի Ամերիկյան համալսարանի մեդիացիոն և արբիտրաժային կլինիկայի կողմից:

Արբիտրաժ խաղ-մրցույթը ֆինանսավորվում է Հայաստանի Ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) իրավագիտության մագիստրոսական ծրագրի և Եվրոպական միության, Եվրոպայի խորհրդի կողմից ֆինանսավորվող – Եվրոպայի միության և Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվող «Աջակցություն Հայաստանում դատական բարեփոխումների իրականացմանը» ծրագրի կողմից: Խաղ-մրցույթի գործը պատրաստվել է իրավագիտության մագիստրոսական ծրագրի Մեդիացիոն և Արբիտրաժային կլինիկայի կողմից բացառապես մրցույթի անցկացման և կրթական նպատակներով: Այն չի ներկայացնում ՀԱՀ որևէ տեսակետ, կարծիք կամ դիրքորոշում: Խաղ-մրցույթի գործը հիմնված չէ ՀՀ-ում իրականացված որևէ դատական կամ արբիտրաժային իրական գործի տվյալների կամ հանգամանքների վրա:

**ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ԳՈՐԾ ԹԻՎ 7**

**«Ոսկեշար» ՍՊԸ**

**Ընդդեմ**

**Գոլդարթ Գրուպ Բամփնի ՓԲԸ-ի և Թրեդարթ Բամփնի ՍՊԸ-ի**

- 1- Գոլդարթ Գրուպ Բամփնի ՓԲԸ-ն («Գոլդարթ») Շվեյցարիայի Ժնև քաղաքում գրանցված ընկերություն է, որը զբաղվում է տարատեսակ ապրանքների տեղական արտադրողներից գնումով և նույն ապրանքների վերավաճառքով միջազգային շուկայում: Այն իր գործունեությունն իրականացնում է դուստր ընկերությունների միջոցով, որոնք տեղական արտադրողների հետ երկարաժամկետ առուվաճառքի պայմանագրեր կնքելով ապահովում են

վերջիններիս արտադրանքի շարունակական վաճառքը՝ արտադրողների համար նպաստավոր և շահավետ պայմաններով: Այդ ընկերությունները գնված ապրանքը ավելի բարձր գներով վերավաճառում են միջազգային շուկաներում և արդյունքում ապահովում շահույթ ընկերության և ընկերության բաժնետեր Գոլդարքի համար:

- 2- **«Ոսկեշար» ՍՊԸ**-ն Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքում գրանցված ընկերություն է, որը զբաղվում է ոսկյա զարդերի մեծածավալ արտադրանքով: Ընկերությունը նպատակ ունի առավել ընդարձակել իր գործունեությունը և փնտրում է միջոցներ իր արտադրանքը միջազգային շուկայում ներկայացնելու/իրացնելու նպատակով:
- 3- Գոլդարքի ներկայացուցիչները 2016 թվականի մայիս ամսին Երևանում կազմակերպված հայկական արտադրանքների ցուցահանդեսի ժամանակ այցելել են Ոսկեշարի տաղավարը, տեսել ու հավանել են պատրաստված զարդերը և նախնական բանակցություններ են վարել Ոսկեշարի տնօրենի հետ՝ հավանական համագործակցության վերաբերյալ:
- 4- Կողմերի միջև բանակցությունների արդյունքում նախնական համաձայնություն է ձեռք բերվել առ այն, որ եթե Գոլդարքը պատրաստ լինի ֆինանսավորել Ոսկեշարին ավելի ընդարձակելու և արդիականացնելու վերջինիս արտադրամասը, Ոսկեշարը պատրաստ է Գոլդարքի կողմից ներկայացված նախագծերով պատրաստել ոսկյա զարդեր և դրանք երկարաժամկետ առուվաճառքի պայմանագրով վաճառել Գոլդարքին՝ վերավաճառքի համար:
- 5- Նախնական պայմանավորվածությունից հետո կողմերի միջև շարունակվել են բանակցությունները, և 2016 թվականի սեպտեմբերի 12-ին Գոլդարքի և Ոսկեշարի միջև ստորագրվել է պայմանագիր (**«Գլխավոր Պայմանագիր»**), որի մեջ ներառված են հետևյալ հոդվածները:

(1) **«Հոդված 3-** Գոլդարքը պարտավորվում է **«Գոլդարք Ֆինանս»** դուստր ընկերության միջոցով հինգ (5) տարի մարման ժամկետով 5,000,000 ԱՄՆ դոլարի վարկ տրամադրել Ոսկեշարին, որը Ոսկեշարը պարտավոր է օգտագործել բացառապես (ա) իր ոսկյա զարդերի արտադրամասի բարեկարգման, ընդարձակման և արդիականացման և (բ) ոսկյա զարդերի արտադրողության համար անհրաժեշտ մաքուր ոսկին ապահովելու համար»:

(2) **«Հոդված 4-** Գոլդարքը պարտավորվում է իր դուստր ընկերությունը հանդիսացող **«Թրեյդարթ»** ընկերության միջոցով Ոսկեշարին տրամադրել տարատեսակ ոսկյա զարդերի նախագծեր և Ոսկեշարը պարտավորվում է օգտագործել այդ նախագծերը ոսկյա զարդեր պատրաստելու և բացառապես Թրեյդարթին վաճառելու համար»:

**«Հոդված 5-** Այնքան ժամանակ քանի դեռ ամբողջությամբ չի մարվել սույն Պայմանագրով նախատեսված Ոսկեշարի և Գոլդարք Ֆինանսի միջև կնքված վարկային Պայմանագրից բխող Գոլդարք Ֆինանսի հանդեպ Ոսկեշարի պարտքը (ներառյալ՝ վարկի մայր գումարն ու տոկոսները), Ոսկեշարի կողմից Թրեյդարթին վաճառված զարդերի գումարը պետք է առաջնահերթաբար օգտագործվի վճարելու համար Գոլդարք Ֆինանսի կողմից Ոսկեշարին տրամադրված վարկի մասնավճարներն ու տոկոսները»:

(3) **«Հոդված 18-** Կողմերը համաձայնում են, որ սույն Գլխավոր Պայմանագրում նախատեսված դրույթների ու պայմանավորվածությունների մանրամասների վերաբերյալ (1) Ոսկեշարի և Գոլդարք Ֆինանսի միջև կստորագրվի վարկային պայմանագիր և (2) Ոսկեշարի և Թրեյդարթի միջև կստորագրվի

նախագծերի տրամադրման և արտադրված ոսկյա զարդերի երկարաժամկետ առուվաճառքի պայմանագիր:

- (4) «**Հոդված 24-** Սույն Պայմանագիրը մեկնաբանվում է առաջնահերթաբար Ոինիդրու Կանոնների (UNIDROIT principles) և, որպես լրացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության իրավունքի համաձայն, ներառյալ բոլոր միջազգային երկկողմ կամ բազմակողմ կոնվենցիաները, որոնց անդամակցում է Հայաստանի Հանրապետությունը այնքանով, որքանով դրանք առնչվում են սույն Պայմանագրին, դրա դրույթներին և սույն Պայմանագրով նախատեսված գործողություններին»:
- (5) «**Հոդված 25-** Սույն Պայմանագրից կամ, առանց որևէ բացառության, դրա կապակցությամբ կողմերի միջև առաջացած ցանկացած վեճ վերջնականորեն լուծվում է արբիտրաժով երեք արբիտրից բաղկացած Տրիբունալի միջոցով: Կողմերից յուրաքանչյուրը ընտրում է մեկ արբիտր, որոնք փոխհամաձայնությամբ ընտրում են երրորդ՝ նախագահող արբիտրին: Արբիտրաժի վայրը Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևանն է, լեզուն՝ հայերեն: Արբիտրաժն անց է կացվում ՈւՆՍԻՏՐԱԼ (UNCITRAL) Արբիտրաժային Կանոններին համապատասխան՝ որպես լրացուցիչ, ըստ անհրաժեշտության, կիրառելով «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքը»:

6- Գլխավոր Պայմանագրի ստորագրումից մեկ ամիս հետո՝ 2016 թվականի հոկտեմբերի 12-ին, ստորագրվում է վարկային պայմանագիր («**Վարկային պայմանագիր**» Գոլդարք Ֆինանսի («**Վարկատու**»)) և Ոսկեշարի («**Վարկառու**») միջև): Համաձայն **Վարկային** պայմանագրի՝

- (1) «**Հոդված 2-** Վարկատուն համաձայնվում է սույն Պայմանագրի 3-րդ հոդվածում նախատեսված նախապայմանների բավարարված լինելու դեպքում Վարկառուի գրավոր դիմումը ստանալուց հետո առավելագույնը երեք օրվա ընթացքում Վարկառուին տրամադրել 5,000,000 ԱՄՆ դոլարի Վարկ: Վարկը կտրամադրվի միանվագ՝ գումարը մուծելով Վարկառուի կողմից Վարկը ստանալու մասին դիմումի մեջ նշված բանկային հաշվին»:
- (2) «**Հոդված 3-** Նախորդ հոդվածում նախատեսված նախապայմանները բավարարելու համար Վարկառուն պարտավոր է Վարկատուին հանձնել հետևյալ փաստաթղթերը՝
- (ա) Վարկառուի Կանոնադրության հաստատված օրինակը, որով թույլատրվում է Վարկառուին վարկ ստանալ տեղական կամ օտարերկրյա ֆինանսական կազմակերպություններից,
  - (բ) Վարկառուի «ղեկավար խորհրդի» որոշումը, որով հաստատվում է վարկի ստացումը Վարկային Պայմանագրի մեջ նախատեսված պայմաններով,
  - (գ) Գրավոր ապացույց՝ հաստատելու համար Վարկային Պայմանագիրը Վարկառուի կողմից ստորագրող անձի ստորագրության իրավունքը և ստորագրության նմուշը,
  - (դ) Վարկառուի նախորդ երեք տարիների հաստատված տարեկան հաշվեկշռի պատճեն, և
  - (ե) Վարկատուի կողմից ընտրված և Վարկատուի վստահությունը վայելող, Հայաստանի Հանրապետությունում արտոնագրված փաստաբանի զեկույցը, որը կհաստատի, որ Վարկային Պայմանագիրը օրինական և վավեր է համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության և որ ստացվել

ու առկա են բոլոր հաստատումներն ու որոշումները Վարկառուի կողմից Վարկը Վարկային պայմանագրի պայմաններին համաձայն ստանալու և այն Վարկատուին վերադարձնելու համար»:

- (3) «**Հոդված 4-** Վարկի նկատմամբ կիրառվելիք փոկոսադրույք է հաստատված «LIBOR» գումարած 2 փոկոս: Վարկի վերադարձի մասնավճարների ժամկետանցի դեպքում նշված փոկոսադրույքին կավելացվի ևս մեկ փոկոս: Տոկոսները կիրառվում են Վարկի չմարված գումարի նկատմամբ և հաշվարկվում ու Վարկառուի կողմից վճարվում են երեք ամսյա կտրվածքով»:
- (4) «**Հոդված 5-** Վարկի մարման ժամկետը 5 փարի է, որ կմեկնարկի Վարկի գումարը Վարկառուի բանկային հաշվին փոխանցման ամսաթվից վեց ամիս հետո: Վարկը Վարկատուին կվերադարձվի համահավասար վեց ամսյա մասնավճարներով»:
- (5) «**Հոդված 6-** Վարկի գումարի վերադարձը Վարկատուին ապահովելու նպատակով Վարկատուի մոտ Վարկառուի անունով կբացվի «**Հափուկ Հաշիվ**»: Վարկառուի կողմից սույն Պայմանագրի թվականին Թրեյդարթ ընկերության հետ կնքված առուվաճառքի պայմանագրով Թրեյդարթ ընկերությանը վաճառված ապրանքների գումարը կմուծվի Վարկատուի մոտ բացված Հափուկ Հաշվին: Յուրաքանչյուր վեց ամիսը մեկ Վարկի մարման ենթակա գումարի վճարման համար սահմանված թվականին, Վարկատուն ի շահ իրեն կգանձի Հափուկ Հաշվում կուտակված գումարից մարման ենթակա գումարի չափով գումար և մնացորդը, առկայության դեպքում, կփոխանցի Վարկառուին կամ Վարկառուի կողմից նշված բանկային հաշվին»:
- (6) «**Հոդված 7-** Կողմերը հասկանում և ընդունում են, որ եթե Վարկի հերթական մարման թվականին, Հափուկ Հաշվում կուտակված գումարը բավարար չլինի վճարելու համար նշված թվականին մարման ենթակա գումարը, Վարկառուն պարտավոր է Վարկատուի կողմից այս մասին գրավոր տեղեկացվելուց հետո առավելագույնը 7 օրյա ժամկետում Վարկատուին վճարել մարման ենթակա գումարի չափով գումար ամբողջությամբ վճարելու համար անհրաժեշտ գումարը»:
- (7) «**Հոդված 8-** Այն դեպքում, երբ Հոդված 7-ով սահմանված կարգով Վարկառուն 7 օրվա ընթացքում Վարկատուին չվճարի անհրաժեշտ գումարը ամբողջությամբ մարելու համար տվյալ թվականին Վարկատուին վճարման ենթակա պարտքի գումարը, Վարկատուն իրավունք ունի, գրավոր ծանուցելով, Վարկառուից պահանջել վճարելու Վարկի գումարի դեռևս չվճարված մասն ամբողջությամբ, ներառյալ մինչ այդ թվականը վճարվելիք փոկոսներն ու փույժը»:
- (8) «**Հոդված 21-** Սույն Պայմանագրի և դրանից բխող կամ դրան առնչվող բոլոր հարցերի նկատմամբ կիրառվում է Շվեյցարիայի Համադաշնության իրավունքը»:
- (9) «**Հոդված 22-** Սույն Պայմանագրից բխող կամ դրա առնչությամբ առաջացած ցանկացած վեճ վերջնականորեն լուծվում է Շվեյցարիայի Համադաշնության իրավասու դատարանի կողմից պայմանով, որ այս պայմանը չի բացառում Վարկատուի իրավունքը առաջացած վեճի կապակցությամբ դիմելու այլ իրավասու դատարանի և կամ արտադատարանական միջոցների, այդ թվում արբիտրաժի, որի դեպքում

արբիտրաժը տեղի կունենա երեք արբիտրի միջոցով Ունսիտրալ արբիտրաժային կանոնների կիրառմամբ»:

7- Սույն օրը՝ 2016 թվականի հոկտեմբերի 12-ին, ստորագրվում է երկարաժամկետ առուվաճառքի պայմանագիր («**Առուվաճառքի պայմանագիր**») Ոսկեշարի («**Վաճառող**») և Թրեյդարթի («**Գնորդ**») միջև: Պայմանագրի համաձայն՝

(1) «**Հոդված 3-** Գնորդը սույն Պայմանագրի ստորագրումից հետո առավելագույնը 3 ամիս ժամկետում Վաճառողին հանձնում է մատանիների և կախազարդերի նախագծեր և այդ նախագծերով ոսկյա զարդերի կապակցությամբ անհրաժեշտ մանրամասներ, որոնք հնարավորություն կտան Վաճառողին սույն Պայմանագրում սահմանված քանակով պատրաստել ոսկյա մատանիներ և կախազարդեր»:

(2) «**Հոդված 4-** Վաճառողը պարտավոր է յուրաքանչյուր օրացույցային ամիս սույն Պայմանագրին կից Թիվ 1 «առդիրում» նախատեսված քանակով 14 կարապ ոսկու բաղադրությամբ զարդեր պատրաստել՝ կիրառելով հոդված 3-ով նախատեսված և Գնորդի կողմից Վաճառողին տրամադրված նախագծերը»:

(3) «**Հոդված 5-** Գնորդը պարտավոր է Վաճառողի կողմից յուրաքանչյուր օրացույցային ամիս 4-րդ Հոդվածում սահմանված պայմաններով պատրաստված զարդերի ամբողջ քանակը գնել Վաճառողից և դրա դիմաց Վաճառողին վճարել 8-րդ հոդվածում սահմանված գումարը»:

(4) «**Հոդված 5-** Վաճառողը պարտավոր է յուրաքանչյուր օրացույցային ամսվա վերջին օրը (աշխատանքային չլինելու դեպքում դրան հաջորդող աշխատանքային օրը՝ Վաճառողի երկրում) Թրեյդինգ ՍՊԸ-ին («Թրեյդինգ»), որ Գնորդի պաշտոնական ներկայացուցիչն է Հայաստանի Հանրապետությունում, հանձնել փյալ ամսում պատրաստված զարդերի ամբողջ քանակը»:

(5) «**Հոդված 6-** Գնորդը պարտավոր է վճարել յուրաքանչյուր ամսվա առաջին 10 օրվա ընթացքում նախորդ ամիս պատրաստված և Վաճառողի կողմից 5-րդ հոդվածի պայմաններին համաձայն վաճառված և իրեն հանձնված զարդերի գինը, առանց հավելյալ հաշվեցույցի կամ փաստաթղթերի պահանջի այն մուծել Վաճառողի բանկային հաշվին, որի մանրամասները պետք է ժամանակ առ ժամանակ Վաճառողի կողմից գրավոր տեղեկացվեն Գնորդին»:

(6) «**Հոդված 7-** Վաճառողն իրավունք չունի Գնորդի կողմից հոդված 3-ի պայմաններով տրամադրված նախագծերով պատրաստված զարդը ուղղակիորեն անձամբ վաճառել անհատ հաճախորդներին և կամ վերավաճառքի համար վաճառել այլ գնորդներին»:

(7) «**Հոդված 8-** Սույն Պայմանագրով Վաճառողի կողմից պատրաստված և Գնորդին վաճառված ոսկյա զարդերի գինը հաշվարկվում է 1 գրամի դիմաց 25 ԱՄՆ դոլար»:

(8) «**Հոդված 9-** Հոդված 8-ով սահմանված գինը վերջնական է և ենթակա չէ փոփոխման Պայմանագրի ամբողջ փոփոխության ընթացքում»:

(9) «**Հոդված 10-** Ի նկատի ունենալով, որ Գնորդն է այս Պայմանագրի պայմաններով պատրաստված զարդերի միակ գնորդը՝ Գնորդը համաձայնվում և պարտավորվում է գնել պատրաստված զարդերի ամբողջական քանակը կամ չգնելու դեպքում Վաճառողին վճարել չգնված զարդերի գնի 80 տոկոսը»:

(10) «**Հոդված 19-** Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման ամսաթվից և գործում է 6 տարի, պայմանով, որ նշված ժամկետի ավարտին

կողմերի ցանկությամբ և հողված 8-ով սահմանված գնի և վճարման պայմանների շուրջ փոխադարձ համաձայնության դեպքում այն կարող է երկարաձգվել կողմերի միջև համաձայնեցված ժամկետով»:

**(11) «Հողված 20-** Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել սույն Պայմանագիրը այն դեպքում, երբ մյուս կողմը կատարած չլինի իր պայմանագրային պարտավորությունները կամ թույլ տված լինի պայմանագրային այլ խախտում և Պայմանագիրը լուծել ցանկացող կողմին էլեկտրոնային նամակով խախտման մասին տեղեկացնելուց հետո առավելագույնը 10 օրում վերադարձ չլինի Պայմանագրի լուծման պատճառը հանդիսացող խախտումը կամ թերացումը: Այս դեպքում, Պայմանագիրը ինքնաբերաբար լուծված կհամարվի լուծել ցանկացող կողմի այդ մասին մյուս կողմին տրված էլեկտրոնային նամակի թվականի դրությամբ»:

**(12) «Հողված 21-** Սույն Պայմանագրի և դրա մեկնաբանության կապակցությամբ կիրառվում է Վաճառող կողմի երկրի իրավունքը, ներառյալ 1980 թվականի «Ապրանքների միջազգային առուվաճառքի պայմանագրերի մասին» Վիեննայի կոնվենցիան: **(13) «Հողված 22-** Այս պայմանագրից կամ դրանով նախատեսված գործողություններից կամ դրանց արդյունքում բխած ցանկացած վեճ վերջնականորեն լուծվում է ադ-հոք (ad hoc) արբիտրաժով, հայցվոր կողմի երկրում Ունսիտրալ (UNCITRAL) արբիտրաժային կանոնների կիրառմամբ: Արբիտրաժի լեզուն կհամաձայնեցվի կողմերի միջև վեճն արբիտրաժին հանձնելու թվականին, իսկ այդ մասին համաձայնություն չլինելու դեպքում կորոշվի արբիտրի միջոցով»:

**8-** Պայմանագրերի ստորագրումից հետո՝ 2016 թվականի նոյեմբերի 7-ին, Ոսկեշարը գրավոր դիմում է ներկայացնում Գոլդարք Ֆինանսին ստանալու համար վարկի ամբողջ գումարը՝ դիմումին կցելով Վարկային Պայմանագրի 3-րդ հոդվածում նախատեսված Վարկի ստացման համար որպես նախապայման պահանջվող փաստաթղթերը: Գոլդարք Ֆինանսը ներկայացված փաստաթղթերը համարում է բավարար և 2016 թվականի նոյեմբերի 12-ին Ոսկեշարի բանկային հաշվին է փոխանցում Վարկի ամբողջ գումարը՝ 5,000,000 ԱՄՆ դոլար:

**9-** Թրեյդարթը 2017 թվականի հունվարի 10-ին Ոսկեշարին է փոխանցում առուվաճառքի Պայմանագրում նախատեսված ոսկյա զարդերի նախագծերը և Ոսկեշարը, նույն թվականին էլեկտրոնային նամակով Թրեյդարթին է փոխանցում Գոլդարք Ֆինանսի մոտ իր անունով բացված հաշվի տվյալները և հանձնարարում, մինչ հաջորդ հանձնարարությունը, վաճառվող ապրանքների գինը ամբողջությամբ փոխանցել այդ հաշվին:

**10-** Նախագծերը ստանալու թվականից մեկ շաբաթ հետո Ոսկեշարը սկսում է զարդերի պատրաստման աշխատանքները և կողմերի համագործակցությունը հաջողությամբ շարունակվում է մինչև 2018 թվականի նոյեմբերի 30-ը:

**11-** 2018 թվականի նոյեմբերի 29-ին Ոսկեշարը, ըստ համաձայնության, և նախորդ ամիսներին կիրառված գործընթացի, էլեկտրոնային նամակով տեղեկացնում է Թրեյդինգին, որ նոյեմբեր ամսվա համար պատրաստված զարդերի քանակը պատրաստ է հանձնման և խնդրում է նախորդ ամիսների պես կազմակերպել դրանց ընդունումը: Ոսկեշարի նամակը մնում է անպատասխան:

**12-** Ոսկեշարը 2018 թվականի նոյեմբերի 30-ին կրկին էլեկտրոնային նամակով դիմում է Թրեյդինգին և, կցելով նախորդ օրն ուղարկված էլեկտրոնային նամակը, խնդրում կազմակերպել հանձնման պատրաստ ապրանքի ընդունումը:

- 13-** Այս անգամ, Թրեյդինգը դեկտեմբեր 1, 2018 թվագրված էլեկտրոնային նամակով տեղեկացնում է Ոսկեշարին, որ իրեն Թրեյդարթի կողմից հանձնարարված է չընդունել ապրանքն ու առաջարկում է այս կապակցությամբ ուղղակի կապվել Թրեյդարթի հետ:
- 14-** Հաջորդ օրը՝ 2018 թվականի դեկտեմբերի 2-ին, Ոսկեշարը էլեկտրոնային նամակով, պատճենը Գոլդարքին, դիմում է Թրեյդարթին և բացատրություն պահանջելով կատարվածի վերաբերյալ՝ խնդրում է անմիջապես հանձնարարել Թրեյդինգին կազմակերպել պատրաստված ապրանքի ընդունումը և Պայմանագրում սահմանված ժամկետում փոխանցել ապրանքի գինը Գոլդարք Ֆինանսի մոտ եղած Ոսկեշարի հաշվին:
- 15-** Թրեյդարթը 2018 թվականի դեկտեմբերի 6-ի էլեկտրոնային նամակով, պատճենը Գոլդարքին, պատասխանում է Ոսկեշարի նամակին՝ նշելով քանի որ Թրեյդարթի հիմնական շուկան Պայմանագրի առարկա զարդերի վերավաճառքի համար Սաուդյան Արաբիան է և վերջերս Թրեյդարթի համար առաջացած իրավական/մաքսային խնդիրների պատճառով ժամանակավորապես կասեցվել է Թրեյդարթի կողմից ապրանքների ներմուծումը Սաուդյան Արաբիա, անհնար է մինչև այդ խնդիրների լուծումը գնել պատրաստված զարդերը, քանի որ դրանց վերավաճառքի հնարավորություն ինքն այլևս չունի:
- 16-** Հաջորդ օրը՝ 2018 թվականի դեկտեմբեր 7-ին, Ոսկեշարը էլեկտրոնային նամակով, պատճենը Գոլդարքին, պատասխանում է Թրեյդարթին նշելով, որ Թրեյդարթի պատասխանն անընդունելի է և ակնհայտորեն խախտում է «Առուվաճառքի պայմանագրերի» պայմանները, քանի որ այդ Պայմանագրի 10-րդ հոդվածի համաձայն՝ պատրաստված զարդերը չգնելու դեպքում Թրեյդարթը բոլոր դեպքերում պարտավոր է Ոսկեշարին վճարել պատրաստված, բայց չընդունված զարդերի գնի 80 տոկոսը: Առ այդ Ոսկեշարը պահանջում է Թրեյդարթից կամ ընդունել հանձնման պատրաստ ապրանքն ամբողջությամբ և պայմանագրային ժամկետում վճարել դրա ամբողջ գինը, կամ չընդունելու դեպքում նույն ժամկետում վճարել դրա գնի 80 տոկոսը: Նույն նամակում Ոսկեշարը պահանջում է Թրեյդարթից անհապաղ Ոսկեշարին նամակով տեղեկացնել, թե պայմանագրում նախատեսված փարբերակներից, որն է ընտրում և համապատասխան վճարումն անմիջապես կատարել Ոսկեշարի հաշվին: Ոսկեշարի նամակը մնում է անպատասխան:
- 17-** Թրեյդարթից պատասխան չստանալով՝ Ոսկեշարն իր 2018 թվականի դեկտեմբերի 9-ի էլեկտրոնային նամակով դիմում է Գոլդարքին՝ պահանջելով, որ Գոլդարքն անմիջապես հանձնարարի իր դուստր ընկերությունը հանդիսացող Թրեյդարթին անհապաղ կատարել Պայմանագրով սահմանված իր պարտականությունները: Նույն նամակում Ոսկեշարն ավելացնում է, որ քանի որ Թրեյդարթի հետ կնքված պայմանագիրը ներառված է ու կազմում է նաև Գոլդարքի հետ ստորագրված Գլխավոր Պայմանագրի մաս, այդ Պայմանագրի ստորագրությամբ Գոլդարքն իրականում երաշխավորել է Գլխավոր Պայմանագրում նախատեսված զույգ պայմանագրերի կատարումը՝ իր դուստր ընկերությունները հանդիսացող ընկերությունների կողմից, ներառյալ Թրեյդարթի պարտականությունների կատարումը համաձայն համապատասխան Պայմանագրերի, հետևաբար Թրեյդարթի կողմից իր պայմանագրային պարտավորությունները չկատարվելու դեպքում, Գոլդարքը ևս

պատասխանատու է Թրեյդարթի պայմանագրային խախտման հետևանքների, ընդ որում Ոսկեշարին պարճառված կամ հնարավոր վնասների համար:

- 18-** Գոլդարքը իր 11 դեկտեմբեր 2018 թվագրված էլեկտրոնային նամակով Ոսկեշարին պատասխանում է ասելով, որ թեև Թրեյդարթը իր դուստր ընկերությունն է, բայց այն առանձին, անկախ և ինքնուրույն ընկերություն է, որ իր գործունեությունը վարում է իր կանոնադրության սահմաններում և իր կանոնադրության մեջ նախատեսված ղեկավար կառույցների/մարմինների որոշումներով և որևէ իրավական հարցում միայն ինքն է պատասխանատու իր ձեռնարկած գործողությունների համար: Ավելին, Գոլդարքի հետ կնքված Գլխավոր Պայմանագիրը նախատեսում է Գոլդարք Գրուպի և Ոսկեշարի առևտրային հարաբերությունների հնարավորությունները և այդ պայմանագրում Թրեյդարթի հետ պայմանագիր կնքելու մասին նախատեսությունները որևէ ձևով Գոլդարքին պատասխանատու չեն դարձնում Թրեյդարթի գործունեության և կամ թերացումների համար:
- 19-** 2018 թվականի դեկտեմբերի 18-ին Ոսկեշարը ստանում է էլեկտրոնային նամակ Գոլդարք Ֆինանսից, որով Գոլդարք Ֆինանսը տեղեկացնում է, որ Հարուկ Հաշվի մեջ հասանելի գումարը բավարար չէ վճարելու համար Վարկի վերադարձի մասնավճարը, որն ըստ վարկային պայմանագրով նախատեսված ժամանակացույցի՝ պետք է վճարվի դեկտեմբերի 20-ին:
- 20-** Ոսկեշարը 2018 թվականի դեկտեմբեր 19-ի նամակով Գոլդարքին տեղեկացնում է Գոլդարք Ֆինանսից ստացած գրության մասին և իր նամակին կցելով Գոլդարք Ֆինանսի նամակի պարճենը՝ առաջարկում է Գոլդարքին կազմակերպել հանդիպում իր, Ոսկեշարի, Գոլդարք Ֆինանսի և Թրեյդարթի միջև փորձելու բանակցությամբ լուծել առաջացած դժվարություններն ու ելք գտնել դրանք փոխհամաձայնությամբ կարգավորելու/հարթելու համար:
- 21-** Գոլդարքը իր 2018 թվականի դեկտեմբերի 21-ի նամակով պատասխանում է Ոսկեշարին, փալիս իր համաձայնությունը հանդիպում կազմակերպելու մասին և առաջարկում հանդիպել Սբ. Ծննդյան և Նոր Տարվա տոներից հետո:
- 22-** Կողմերը, Գոլդարքի հրավերով, հանդիպում են 2019 թվականի հունվարի 10-ին, բայց բանակցություններն անցնում են անարդյունք ու կողմերի միջև առաջած հարցերի լուծման կապակցությամբ համաձայնություն չի կայանում:
- 23-** 2019 թվականի հունվարի 30-ին Գոլդարք Ֆինանսը էլեկտրոնային գրությամբ տեղեկացնում է Ոսկեշարին, որ քանի որ 2018 թվականի դեկտեմբերի 20-ին Վարկի վճարման ենթակա գումարը չի վճարվել, Գոլդարք Ֆինանսը Վարկային Պայմանագրի 7-րդ հոդվածի համաձայն պահանջում է Ոսկեշարից նամակի թվականից առավելագույնը մինչև 10 օրվա ընթացքում Գոլդարք Ֆինանսին վճարել Վարկի դեռևս չվերադարձված գումարն ամբողջությամբ, ներառյալ մինչ վճարման թվականը կուտակված տոկոսներն ու տույժը, որ պետք է հաշվարկվի Վարկային Պայմանագրի պայմաններին համաձայն, այլապես Գոլդարք Ֆինանսը պարտավորվում է դիմել դատարան:
- 24-** 2019 թվականի փետրվարի 10-ին Ոսկեշարը Գոլդարքին և Թրեյդարթին հասցեագրված առանձին էլեկտրոնային նամակներով հայտնում է, որ քանի որ առկա վեճը փոխհամաձայնությամբ լուծելու համար բանակցությունները մնացել են անարդյունք և քանի որ (1) առկա վեճն ունի նույն հիմքերը, որի համար հավասարապես պատասխանատու է թե՛ Գոլդարքը և թե՛ Թրեյդարթը, (2) իր պահանջը Գոլդարքի և Թրեյդարթի նկատմամբ նույն է և (3) վեճի հիմքը հանդիսացող երկու պայմանագրերում էլ նախատեսված է արբիտրաժ,



հետևաբար պահանջում է սկսել համատեղված արբիտրաժային գործընթաց՝ Գոլդարքի և Թրեյդարթի դեմ միաժամանակ: Նույն նամակում Ոսկեշարը նշանակում է իր արբիտրին:

**25-**Գոլդարքը իր 14 փետրվար, 2019 թվագրված նամակով պատասխանում է, որ համաձայն է սկսելու արբիտրաժի գործընթացը և Թրեյդարթի համաձայնության դեպքում առարկություն չունի անցկացնել համատեղ արբիտրաժ: Գոլդարքն իր այս նամակում նշանակում է նաև իր արբիտրին:

**26-**Թրեյդարթը իր 15 փետրվար, 2019 թվագրված նամակով համաձայնություն է տալիս սկսելու արբիտրաժի գործընթացը և անցկացնելու այն համատեղված կարգով: Նույն նամակում Թրեյդարթը տալիս է իր հավանությունը Գոլդարքի կողմից նշանակված արբիտրին:

**27-**Կողմերի նշանակած արբիտրները հանդիպում են 2019 թվականի փետրվարի 19-ին:

**28-**Կատարվում է կողմերի դիրքորոշումների և փաստաթղթերի փոխանակում և արբիտրաժային նիստ է նշանակվում 2019 թվականի մարտի 23 և 24-ին: